ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-03/22

ք.Երևան 03 մարտի 2022թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությունն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից և «Նորմակոմ» ՍՊ ընկերությունն, ի դեմս տնօրեն Ն.Յոլչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», կողմից, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ «Պայմանագիր», հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագիրը կարգավորում է Պատվիրատուի և Կատարողի միջև հարաբերությունները ք.Երևան Նորք, Գ. Հովսեփյան 95 գտնվող Պատվիրատուին պատկանող ***1-ին տեխնիկական մասնաշենքի հրդեհային ահազանգման համակարգի (ՀԱՀ)*** ստուգման, թերությունների արձանագրման և դրանց վերացման առաջարկի ձևավորման աշխատանքներում:

1.2. Աշխատանքների կատարման համար հիմք են հանդիսանում Պատվիրատուի կողմից տրամադրվող առկա ՀԱՀ նախագիծը:

1.3. Կատարողը իրագործում է Պայմանագրի 1.1 և 1.2 կետերում նշված աշխատանքները ղեկավարվելով այն ցուցումներով, որոնք տրամադրվում են Պատվիրատուի կողմից:

1.4. Կատարողը աշխատանքների արդյունքները ներկայացնում է Պատվիրատուին՝ համաձայն սույն Պայմանագրի Հավելված 1-ի:

1.5. Թերությունների վերացման համար գնային առաջարկը և ժամկետները ներկայացվում են հավելյալ:

2. ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են 10 /տաս/ աշխատանքային օրվա ընթացքում սկսած Պայմանագրի կնքման օրվանից:

2.2. Կատարողը իրավասու է Պատվիրատուի համաձայնությամբ ժամանակից շուտ հանձնել աշխատանքը ամբողջությամբ: Պատվիրատուն ընդունում և վարձատրում է այդպիսի աշխատանքը Պայմանագրով նախատեսված ամբողջ ծավալով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի համաձայն Պատվիրատուն վճարում է Կատարողին 1.1 և 1.2 կետերի աշխատանքների համար 210 000 (երկու հարյուր տասը հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ 35 000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:

3.2. Կատարված աշխատանքների համար վճարումը իրականացվում է Պատվիրատուի կողմից փաստացի կատարված ծավալների երկկողմանի հաստատված կատարողական ակտին համապատասխան ներկայացված հաշիվ ապրանքագրի հիման վրա 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Պայմանագրի ծավալից դուրս լրացուցիչ աշխատանքների համար կից կնքվում է հավելված, համապատասխան առաջադրանքով, աշխատանքի ծավալով և վճարման կարգով:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պատվիրատուի կողմից, ավարտված աշխատանքների ընդունումը իրականացվում է Կատարողի կողմից ներկայացվող կատարողական ակտի հիման վրա:

4.2 Պատվիրատուն պարտավոր է իր կողմից ստորագրված ակտը կամ աշխատանքների ընդունման հիմնավորված մերժումը ուղարկել Կատարողին՝ աշխատանքների կատարողական ակտի ստացման օրից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Պատվիրատուի կողմից կատարված աշխատանքների հիմնավորված մերժման դեպքում կողմերը կազմում են երկկողմանի ակտ, որտեղ նշում են անհրաժեշտ վերափոխման աշխատանքները և ժամկետները:

4.4. Պատվիրատուն իրավասու է հսկել կատարվող աշխատանքների ընթացքը ու որակը:

5. ԽՈՐՀՐԴԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1. Աշխատանքների նպատակին, իմաստին և առանձնահատկությանը վերաբերվող տեխնիկական ամբողջ բովանդակությունը համարվում է առևտրային և ծառայողական գաղտնիք:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման դեպքում կողմերը կրում են պատասխանատվություն համաձայն ՀՀ օրենսդրության:

6.2. Կատարված աշխատանքների չհիմնավորված մերժման դեպքում Պատվիրատուն փոխհատուցում է Կատարողի վնասը, աշխատանքի փաստացի ծախսերի չափով:

6.3. Պայմանագրով նախատեսված 1.1 և 1.2 կետերի պարտավորությունների չկատարման դեպքում Կատարողը փոխհատուցում է Պատվիրատուի կրած վնասը:

6.4. Պայմանագրի պարտավորությունների անորակ կատարման դեպքում տուժած կողմի վնասի չափը որոշում է երկու կողմից հավասար քանակով ներկայացված հանձնաժողովը, անկախ փորձագետի մասնակցությամբ:

6.5. Վնասի չափի և փոխհատուցման կարգի անհամաձայնության դեպքում տուժած կողմը իրավասու է դիմել դատարան:

6.6. Աշխատանքների հաստատված ընդունման ժամկետը խախտելու դեպքում Պատվիրատուն Կատարողին տուգանք է վճարում կատարված աշխատանքների արժեքի 0.1%-ի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրվա դիմաց:

6.7. Աշխատանքների կատարմանհաստատված ժամկետը խախտելու դեպքում Կատարողը Պատվիրատուին տուգանք է վճարում կատարված աշխատանքների արժեքի 0.1%-ի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրվա դիմաց:

6.8. Պայմանագրով պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դրանք հետևանք են Ֆորս-մաժորային հանգամանքների:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Պայմանագիրը վավեր է (ուժի մեջ է մտնում) կողմերի ստորագրման պահից:

7.2. Պայմանագրի բոլոր թերթերը կարվում և ստորագրությունները կնքվում են կողմերի կնիքներով:

7.3. Պայմանագիրը կնքվում է 2 /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 95 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 1570027609970100 ՀՎՀՀ 01501898	ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 48, գրաս. 2 ԱՇԻԲ «Արաբկիր» մ/ճ Հ/Հ 2471200347530000 ԱՇԻԲ «Արաբկիր» մ/ճ ՀՎՀՀ 00847633
Գլխավոր տնօրեն	Տնօրեն
_____ Մ. Միլիտոնյան	_____ Ն. Յոլչյան

Հավելված 1
№240222/01
ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-03/22 *պայմանագրի*
_____ *մարտի 2022թ*

ԱԿՏ
ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՀԱՁԱՆԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Հ/հ	Աշխատանքի անվանում	Արձանագրված թերություն	Թերության վերացման առաջարկ	Ծանոթագրություն
1				
2				
3				
???				

Կատարող
"ՆՈՐՄԱԿՈՄ" ՍՊԸ
Գտնվելու վայրը ք.Երևան, Մամիկոնյանց 48
ՀՎՀՀ 00847633

Տնօրեն _____ Ն.Յոլչյան

Հանձնեց՝
Կոմերցիոն տնօրեն _____ Դ?Այվազյան
պաշտոն, անուն, ազգանուն

"_____" _____ 2022թ.

Պատվիրատու
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
Գտնվելու վայրը ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 95
ՀՎՀՀ 01501898

Գլխավոր տնօրեն _____Մ. Միլիտոնյան

Ընդունեց՝ ԱՏ և ՏՀ անվտանգության ճարտարագետ
_____Է. Խաչատրյան
պաշտոն, անուն, ազգանուն

"_____"_____2022թ.